



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ
 ԶՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Դեկտեմբեր 31-ին, կ.ե. ժամը 1-ին, Զրեսենթա Հովիտի Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ արարողութեանց պիտի նախագահէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան եւ Ս. Պատարագի ընթացքին պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը:

Կը հրաւիրենք Զրեսենթա Հովիտի հաւատացեալ մեր ժողովուրդը ներկայ ըլլալու Ս. Պատարագին, եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

**PRELATE TO PRESIDE OVER HOLY MASS AT THE
 CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, December 31st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Holy Mass and deliver the sermon at the Armenian Apostolic Church of Crescenta Valley. Mass will begin at 1:00 p.m.

Mass will take place at Unity Church of the Valley, located at 2817 Montrose Avenue in La Crescenta.

**ՅՈՒՆՈՒԱՐ 1ԻՆ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՅԱՏՈՒԿ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
 ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Հայկական գեղեցիկ աւանդութիւն մըն է Նոր տարին դիմաւորել Աստուծոյ Տան մէջ, երախտագիտութիւն յայտնել մեզի շնորհուած բարիքներուն համար ու կեանքի Նոր շրջանը բանալ աղօթքով եւ աստուածային պարգեւներու խնդրանքով:

Համաձայն այս աւանդութեան, Երկուշաբթի, Յունուար 1-ին, Նոր Տարուան առաջին օրը, Թեմիս բոլոր եկեղեցիները բաց պիտի ըլլան եւ ժամերգութիւն տեղի պիտի ունենայ:

Մեր հաւատացեալ ժողովուրդի զաւակները այսպէսով առիթ պիտի ունենան իրենց շրջաններու եկեղեցիներուն մէջ աղօթքով ու մեր եկեղեցւոյ իւրայատուկ մթնոլորտին մէջ բոլորելու Նոր Տարուան առաջին առաւօտեան ժամերը:

MORNING SERVICE ON NEW YEARS DAY

Over the years, it has become a tradition for us to welcome the New Year with prayer and by expressing gratitude to Almighty God for our blessings.

In keeping with this tradition, all Prelacy churches will be open on New Year's Day and will offer morning service.

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ

Մեր Թեմի տարիներու աւանդութեան համաձայն, Յինգզաբթի, 4 Յունուար 2007-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի նախագահութեամբ, Ս. Պատարագ պիտի մատուցուի Mission Hills-ի «Արարատ» Տան մատրան մէջ, մասնակցութեամբ Թեմիս բոլոր հոգեւոր հովիւներուն:

Պիտի պատարագէ Մոնթպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զիւլ. Գամպուրեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարէ Ս. Նահատակաց եկեղեցւոյ Դպրաց Դասը, ղեկավարութեամբ խմբավար Կոմիտաս Զէշիշեանի:

HOLY MASS AT ARARAT HOME

In keeping with tradition, Holy Mass will be offered at Ararat Home in Mission Hills on the occasion of the New Year and the Feast of the Nativity and Epiphany of our Lord. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over the Mass, which will take place on Thursday, January 4, 2007, at 10:30 a.m.

Rev. Ashod Kambourian, Pastor of Holy Cross Cathedral in Montebello, will conduct Mass with the participation of all Prelacy clergy and the Holy Martyrs Choir, led by Mr. Gomidas Keshishian.

ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶՐՕՐՀՆԷՔ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ուրբաթ, Յունուար 5-ը Ս. Ծննդեան ճրագալոյցի օրն է:

Այս առիթով Ս. Պատարագ պիտի մատուցուի մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ եւ Ս. Հաղորդութիւն պիտի տրուի մեր հաւատացեալ ժողովուրդին:

Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագ պիտի մատուցէ Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Մոնթպելլոյի Ս. Խաչ Մայր եկեղեցւոյ մէջ:

Իսկ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան պիտի նախագահէ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսարիչ եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի ընթերցէ Առաջնորդ Սրբազան հօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան պատգամը:

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Շաբաթ, Յունուար 6-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր Սուրբ Պատարագ, որուն աւարտին պիտի կատարուի աւանդական ջրօրհնէք:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ, իր պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրհնէք պիտի կատարէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Ս. Եփրեմ Արք. Թապագեան պիտի պատարագէ եւ քարոզէ Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

Գերպ. Ս. Միւռն Ճ. Կրդ. Ազնիկեան պիտի պատարագէ եւ քարոզէ Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ:

Յոգշ. Ս. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան պիտի պատարագէ եւ քարոզէ Սան Ֆրանսիսքոյի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

HOLY MASS ON THE FEAST OF THE NATIVITY AND EPIPHANY

Friday January 5 is the eve of the Feast of the Nativity and Epiphany of our Lord Jesus Christ. On this day, Holy Mass will be offered at all Prelacy churches.

The Prelate will conduct Mass and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena. Very Rev. Fr. Muron Aznikian will be at Holy Cross Cathedral in Montebello, and Very Rev. Fr. Barthev Gulumian at St. Gregory Church in San Francisco.

Holy Mass will also be offered on the morning of Saturday, January 6, followed by blessing of the water.

On this Feast, the Prelate will conduct Mass, deliver the sermon, and perform the blessing of water at St. Mary's Church in Glendale.

H.E. Archbishop Yeprem Tabakian will be at St. Garabed Church in Hollywood, while Very Rev. Fr. Muron Aznikian will be at Holy Martyrs Church in Encino, and Very Rev. Fr. Barthev Gulumian at St. Gregory Church in San Francisco.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին առիթով, Շաբաթ, Յունուար 6-ի երեկոյեան, հայկական մեր տոհմիկ աւանդութեան համաձայն, տեղի պիտի ունենայ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան աւանդական ընթրիքը, երեկոյեան ժամը 7:30-Էն սկսեալ, Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ մարմինին:

PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER

On the evening of Saturday, January 6, 2007, the Prelate's New Year and Christmas Dinner, a traditional event organized by the Prelacy Ladies Auxiliary, will take place at Bagramian Hall of Holy Cross Cathedral in Montebello starting at 7:30 p.m.

ՄԵՌԵԼՈՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կիրակի, Յունուար 7-ին, Ս. Ծննդեան Մեռելոցի տոնին առիթով, եւ համաձայն մեր եկեղեցւոյ աւանդութեանց, մեր հանգուցեալ հարազատներուն յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի «Հոլիվուտ Հիլզ»ի գերեզմանատան Hall of Liberty սրահին եւ Կլէնտէյլի գերեզմանատան Church of the Recessional եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 9-ին, գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւոր հայրերուն:

Գերեզմանատան մէջ տեղի ունենալիք հաւաքական հոգեհանգստեան պաշտօնէն ետք, նոյն օրը Թեմիս եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի, որմէ ետք տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան արարողութիւն:

REQUIEM SERVICE AT FOREST LAWN

On Sunday, January 7, requiem service will be held at the Hollywood Hills Forest Lawn Hall of Liberty and the Glendale Forest Lawn Church of the Recessional. The service, presided over by the Prelate and with the participation of Prelacy clergy, will begin at 9:00 a.m.

Afterward, Holy Mass will be offered at all Prelacy churches as well as requiem service.

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնակալ օրերուն առիթով, Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան եւ Բարշ. Րաֆֆի Սրկ. Կարապետեան հանդիպումներ ունեցան հայ բանտարկեալներու հետ:

Շաբաթ, Դեկտեմբեր 23-ին Հայր Սուրբը տնօրհնէքի արարողութիւն կատարեց եւ փոխանցեց Սրբազան Հօր օրհնութիւններն ու շնորհաւորութիւնները, բանտարկեալներու վերակազդուրման կեդրոնին մէջ:

Իսկ Ուրբաթ, Դեկտեմբեր 29-ին, Հայր Սուրբը եւ Րաֆֆի Սարկաւազը պիտի այցելէն Magic Mountain-ի մօտ NCCF-ի բանտը, հանդիպում ունենալու համար հայ բանտարկեալներուն հետ եւ փոխանցելու Ս. Ծննդեան խորհուրդը:

VISIT TO ARMENIAN INMATES

On the threshold of the New Year and Epiphany, Very Rev. Fr. Barthev Gulumian and Chaplain Rafi Garabedian are visiting Armenian inmates to convey to them the message of the Nativity and Epiphany.

On Saturday, December 23rd, Very Rev. Fr. Barthev visited the inmate rehabilitation center and conveyed the Prelate's best wishes. On Friday, December 29,

Very Rev. Fr. Barthev and Chaplian Rafi will visit the North County Correctional Facility to meet with the inmates.